

# ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 21 (65)  
20 փետրվար, 2008թ.

## Տարածքային զարգացումը գերակայություն է

*Վարազդատ Կարապետյան, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն*

### Տեսակետ

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման միտումները հուսադրող են: Տնտեսական աճի տեմպերը շարունակում են մարծր մնալ՝ ապահովելով տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի հնարավորությունների աճ:

Միևնույն ժամանակ առկա են նաև մտահոգիչ փաստեր՝ կապված զարգացման տարածքային անհամաչափությունների հետ: Հայաստանի տնտեսության գերակշիռ հատվածը վերարտադրվում է Երևանում և քաղաքի շրջակայքում: Մարզերը կարծես անմասն են այդ զարգացման, ինչպես նաև դրա ընձեռած հնարավորություններից օգտվելու հարցում: Հայաստանի կառավարության կողմից մինչ օրս կիրառած տարածքային քաղաքականության լծակները թեև մեղմում են մարզերի սոցիալական լարվածությունը, սակայն չեն ստեղծում ինքնուրույն վերարտադրվելու լրացուցիչ հնարավորություններ:

20-րդ դարի 80-ական թվականներին զարգացած արդյունաբերությամբ երկրները տարածքային քաղաքականությունն ավանդաբար ուղղում էին երկրի կենտրոնի և մարզերի միջև առկա տնտեսական տարանջատվածության վերացմանը՝ թույլ շրջանների ինդուստրիալիզացիայի միջոցով: Այս քաղաքականությունը շեշտը դնում էր ընդհանուր զարգացումից հետո մնացող շրջաններում արտադրական ենթակառուցյցների վիճակի բարելավման և նոր ներդրումների ներգրավման վրա: Այսպիսով, տարբեր հատվածներում զարգանում էին որոշակի ոլորտներ՝ քիմիական արդյունաբերությունը, պողպատի արտադրությունը, նավթի արդյունահանումը կամ շինարարությունը: Որոշ դեպքերում այս քաղաքականությունը կարողանում էր վերացնել կենտրոն-մարզեր տարանջատվածությունը, սակայն հնարավորություն չէր տալիս արդյունավետ լուծումներ գտնել մարզերի տնտեսության կառուցվածքային ճգնաժամը հաղթահարելու համար:

Այս պատճառով 1980-ական թթ. սկսեցին նոր մոտեցումներ զարգանալ, որոնք ուղղված էին մարզերի ներքին պոտենցիալի ամրապնդմանը: Այս քաղաքականությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է տարածաշրջանների հզորությունների և առավելությունների նորացման, ինչպես նաև տեղի ունեցող փոփոխություններին արագ հարմարվելու վրա՝ օգտագործելով այնպիսի «փափուկ» գործիքներ, ինչպիսիք են ձեռնարկատիրությանն ուղղված կառույցների զարգացումը

կամ տարածքի ազդեցիկ դերակատարների և ձեռնարկատերերի միջև արդյունավետ երկխոսության կազմակերպումը: Տարածքային զարգացման ռազմավարությունների հաջողությունը ներկայումս կախված է համայնքներում գործող հիմնական դերակատարների (ազդեցիկ ձեռնարկատերեր, կառավարման մարմինների ղեկավարներ, համայնքի վրա ազդեցություն ունեցող մարդիկ) մտածելակերպի և վարքագծի փոփոխումից: Հեռանկարի տեսլականը հիմնվում է համակարգի տարրերի համագործակցության վրա. տարածքային զարգացման քաղաքականության հաջողությունը կախված է տարածքային միավորի ներսում տնտեսական, սոցիալական, մշակութային և բնական ռեսուրսների փոխհարաբերությունից, ինչպես նաև բնակավայրի ազդեցիկ անձանց համագործակցությունից: Կառավարման նոր ձևերի օգտագործում. ներկա պայմաններում տարածքային զարգացման համար արդյունավետ չեն ո՛չ պետական ուժեղ քաղաքականությունն ու հսկողությունը, ո՛չ ազատ շուկաների ինքնակարգավորումը: Տարածքային զարգացմանն ուղղված հաջողակ և ընդունելի քաղաքականությունը հիմնվում է համայնքում առկա տարբեր կառույցների արդյունավետ համագործակցության վրա: Այս տեսակետից հատկապես կարևոր են ցանցային կարգավորման ձևերը, ինչպես, օրինակ, աջակցությունն արդյունաբերական կլաստերներին: Դերակատարների մտածելակերպի և գործելակերպի հիմքում սոցիալական համակարգի կայացումն է. տարածքային քաղաքականություն մշակողները, իրականացնողները և շահառուները գնահատվում են որպես սոցիալական դերակատարներ: Ի դեպ, ծրագրերն ու նախագծերը պետք է հաշվի առնեն բոլոր կողմերի անձնական շահերը:

Այսպիսով, հաջող գործելակերպի համար անհրաժեշտ է ընթացել առկա սոցիալական համակարգի առանձնահատկությունները: Այս սկզբունքների կիրառումը ենթադրում է, որ տարածքային քաղաքականությունը պետք է լինի. Տեղայնացված. պետք է լինի կոնկրետ տեղանքում՝ հաշվի առնելով վայրի առանձնահատկությունները: Միասնական. պետք է բազմապատկի պետական հատվածի և բիզնեսի, տնտեսության տարբեր հատվածների, հասարակական և մասնավոր հատվածների կապերը: Կենսունակ. պետք է բավարարի սերնդի պահանջները՝ միաժամանակ մեծացնելով կապիտալը հաջորդ սերունդների համար: Արդյունքում ծրագրերը և նպատակներն ավելի բազմաշերտ են դառնում, հիմնական դերակատարներն սկսում են հաշվի առնել զարգացման գործընթացի բարդությունը և կարևորությունը: Մի քանի տարի է, ինչ Հայաստանում սկսվել են տարածքային զարգացման քաղաքականության մշակման աշխատանքները: Քաղաքական գործընթացներում նոր մոտեցումների հետևանքով կբարձրանան դրանց արդյունավետության և հասարակության կողմից ընդունելիության աստիճանը: Արդի մոտեցումների ուսումնասիրումը կարևորվում է նաև երկրում առկա կառուցվածքային խնդիրների հաղթահարման տեսանկյունից: